

Բ Ա Ն Ա Վ Ե Ճ Д И С К У С С И И

ՍԱՐԳՈՒՐԻ II-Ի ԱՆԴՐՈՆԵՎԱՆՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԵՐԹՈՒՂՈՒ ՇՈՒՐՋ

Ս. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ուրարտական արքա Սարգուրի II-ը (մ. թ. ա. 764—735 թթ.) Գանձադրության տարեգրության մեջ պատմում է, որ իր գահակալությունից ավելի քան 10 տարի անց, ուրարտական զորքերի գլուխ անցած մի արշավանք է ձեռնարկել Սևանա լճի արևմտյան և հարավային ափերը բռնած Ուեդուրի-էթիունի ցեղամիությունից դեմ¹։ Արշավանքի նպատակը այդ ցեղամիության մեջ մտած երկրների վերջնական նվաճումն էր։ Չնայած արշավանքի հաջող ավարտին (Ծովակի արձանագրության մեջ Սարգուրի II-ը հայտնում է, որ զրավված է անգամ հարավային ափի արևելյան մասը՝ Արկուկի երկիրը)², ուրարտացիների դիրքերն այստեղ մնում էին խիստ երեւոյն։ Ահա թե ինչու նկարագրված դեպքից շուրջ մեկ տասնամյակ անց Սարգուրի II-ը ստիպված է եղել մի նոր արշավանք ձեռնարկել Ուեդուրի-էթիունի ցեղամիության մեջ ընդգրկված երկրների դեմ։ Այս նոր արշավանքի ընթացքում ուրարտական զորքերը ոչ միայն վերանվաճում են Սևանա լճի արևմտյան և հարավային առափնյա երկրները, այլև ներխուժում են նոր՝ բոլորովին անծանոթ երկրներ։ Խոսքը տանք իրեն՝ Ուրարտուի հզոր արքային, որը նույն Գանձադրության տարեգրության մեջ հայտնում է հետևյալը. «Գրավեցի Վելեքուխե երկիրը։ Քսաներկու ամրոց, ինքն ամրացված էր, կռվում զրավեցի։ Ամրոցները ավերեցի, քաղաքները այրեցի, երկիրը կերա (= յուրացրի)։ Մարդ, կին քեցի դեպի Բիաինեյե լեռկիրը։ Սարգուրեն ասում է. — Եկավ առջևս նիդե արքան Վելեքուխե լեռկիրի։ Երկրպագում [?] էր։ Մահա դարձրի, հարկի տակ գցեցի, հարկը Սարգուրեին տալու համար։ Սարգուրեն ասում է. — Հենց այդ տարում երրորդ անգամ արշավեցի Արկուկե լեռկիրի վրա։ Ենթարկեցի Արկուկե լեռկիրը, Ադախու լեռկիրը, Լուերու լեռկիրը, Լուերու լեռկիրը, Եշումուա լեռկիրը, Քամանիու լեռկիրը, Կույալբա լեռկիրը, Ուխունե երկիրը, Տերիա երկիրը։ Քսան ամրոց, ինքն ամրացված էր, կռվում զրավեցի։ Հարյուր քսան քաղաք մեկ օրում (— արշավանքում) նվաճեցի։ Ամրոցները ավերեցի, քաղաքները այրեցի, երկիրը կերա (= յուրացրի)։ Մարդ, կին այնտեղից հանեցի։ Սարգուրեն ասում է. — Քանի մարդ իմ գեների առջևից ճողոպրում էր և բռնեց (— զրավեց) Ուշքիա և Բամ լեռները, վերապաշարեցի, սպանեցի։ Ուվքեր ճողոպրում էին, Թելչեբան (= կայծակը) այրեց»³։

Արձանագրության թվարկած ցեղային երկրների առաջին խումբը՝ Վելեքուխի (Velikuhi), Արկուկի (Arquqi), Ադախու (Adahu), Լուերու (Lueru) և Կամանիու (Kamaniu), տեղադրում են Սևանա լճի արևմտյան և հարավ-

¹ Г. А. Меликшвили. Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УРН). М., 1960, № 155 D, стр. 45—52.

² УРН, № 161: Գր. Ղափանցյան. Ուրարտուի պատմությունը (այսուհետև՝ ՈւՊ). Երևան, 1940, էջ 186, ծան. 1:

³ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (այսուհետև՝ ՀԺՊ). հ. 1, Երևան, 1981, էջ 79—80 (Թարգմանությունը Զ. Զ. Կարազյուզյանի)։ Տե՛ս նաև УРН, № 155 F, стр. 21—23: Гр. Капанцян. Историко-лингвистические работы. II, Ереван, 1975, с. 32, пр. 2.

վալին ափերին՝ ներկայիս Կամուլի, Մարաունու և Վարդենիսի շրջաններում⁴։ Երկրների երկրորդ խումբը՝ Էշումա (Ešumua), Կուլալբա (Qu'alba), Ուխունի (Uhuhi) և Տերիա (Tertia), Ն. Վ. Հարությանյանը ենթադրարար տեղորոշում է լճից հարավ և հարավ-արևելք ընկած շրջաններում⁵, չնայած Ս. Տ. Երեմյանը վաղուց էր մատնանշել Տերիայի համապատասխանությունը վաղ միջնադարի հայկական Տրի գավառին (այժմ՝ Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջան)⁶, իսկ Հ. Հ. Կարադյոզյանը հնարավոր է համարում դրանցից նախավերջինը՝ Ուխունին ևս տեղադրել այդ կողմերում՝ հետագա Արցախում⁷։ Այս առթիվ հիշենք նաև, որ Գր. Ղափանցյանը, նկատի առնելով Մովսիս արձանագրության «գրավեցի Արկուկյան երկիրը, անջատեցի (կտրեցի) մինչև Ուրտևիսի երկիրը»⁸ առգերը, ենթադրում էր, որ Սարգսի II-ի հիշատակած Ուրտևիսին նույն Արցախն է⁹։ Urtehi = Արցախ նույնությունը փորձել է հնչյունաբանորեն հիմնավորել Հ. Հ. Կարադյոզյանը¹⁰։ Ուրարտական թագավորների կողմից Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան եզերական լեռնաստանը նվաճված և Ուրարտական պետության մեջ ընդգրկված լինելու իրողությունը այսօր կասկած չի հարուցում¹¹։ Ստորև կտեսնենք, որ իսկապես, նորանվաճ չորս երկրներից ոչ միայն Տերիան և Ուխունին, այլև Կուլալբան և Էշումունան նույնպես տեղադրվում են այստեղ՝ Սևանի ավազանի և Կուր-Արաքսյան հարթավայրի միջև։

Հին ժամանակներում Սևանա լճի հարավ-արևելյան առափնյա շրջաններից ղեպի Կուր-Արքասյան հարթավայր տանող երկու բանուկ ճանապարհներից մեկը Արևելասևանյան (Սողբի) լեռնաշղթան հատող Զոդի լեռնանցքով տանում էր ղեպի Քարթառի վերին հոսանքի շրջանը, իսկ այնտեղից ղեպի հոսանքն ի վար, Հաթնրքի և Կաղանկատույքի միջով՝ Պարտավ¹²։ Այդ ճանապարհներից երկրորդը Սևանի (Քաշաթաղի, Շահաղի) լեռնաշղթան հատող Փամբակի լեռնանցքով («գլուխ Փառխոսի») և Գետաբակի ու Քարհատի մոտերքով տանում էր Գանձակ¹³։ Անտարակույս, ուրարտական զորքերը հենց այս ճանապարհով կարող էին թափանցել Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան եզերական շրջանները։ Իսկ թե իր անդրսևանյան արշավանքի համար Սարգսի II-ը այս ճանապարհներից ո՞ր մեկն էր ընտրել, կարելի էլինի պարզել միայն Քամանիու երկրի, Բամ և Ուշքիա լեռների տեղադրությունը ճշտելուց հետո։ Նախ, Քամանիու երկրի մասին։

4 ՈւՊ, էջ 182, 184, 186—187, 197։

5 Н. В. Арутюнян. Бияйнили (Урарту). Ереван, 1970, с. 273, пр. 349.

6 Ս. Տ. Երեմյան. Ն. Մառը և VII դարի հայոց «Աշխարհացոյց»-ը.—Մառը և հայադիտության հարցերը. Երևան, 1968, էջ 82։

7 ՀԵՊՔ, հ. 1, էջ 82, ծան. 26։

8 ՈւՊ, էջ 136 (ՀՄՄ. ՆԿՄ, № 161)։

9 Г. А. Кананцян. Chetto—Armeniasa. Сравнительно-лингвистическое исследование, выявляющее до 200 общих слов и форм. Ереван, 1931, с. 140.

10 Հ. Հ. Կարադյոզյան. Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները.—ՀՍՍՀ ԳԱ Կուրեր հան. դիս. 1978, № 10, էջ 56—57։

11 И. М. Дьяконов. Хурритский и урартский языки.—Языки Азии и Африки. III, М., 1979, с. 52; Н. В. Арутюнян. Указ. соч., с. 281—282.

12 Հ. Մանանդյան. Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պետրոսյանի. Երևան, 1936, էջ 202—204։ Ս. Տ. Երեմյան. «Հայաստանը X դարի վերջին և XI դարի սկզբին» րարտագր (Հայկական ՍՍՌ ատլաս. Երևան—Մոսկվա, 1961, էջ 105)։

13 Ս. Տ. Երեմյան. «Հայաստանը և հարևան երկրները 855—953 թթ.» քարտեզը (Հայ ժողովրդի պատմություն. հ. 3, Երևան, 1976)։

Ուրարտագիտության մեջ ընդունված կարծիքի համաձայն, Քամանիու երկիրը գտնվել է Սեանա լճի հարավային ափին¹⁴։ Մեր կարծիքով այն գտնվել է լճի արևելյան ափին, բռնելով Սեանի (Քաշաթաղի) լեռնաշղթայի արևմտյան ստորոտները։ Այդ են վկայում Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունները։ Քամանիու (Kaman-iu) երկրանունն ունի ցեղանվանական ծագում, որի պատճառով էլ ուրարտական արձանագրություններում այն բերվում է այրանվան ցուցիչով¹⁵։ Համանաբար, այս երկրանվան հիմքում ընկած *fաման ցեղանունն է, որ Խորենացին ընկալել է ֆանան-ացի (մանավանդ, որ վերջիններիս ավանդական նախնի Քանանի հայրը կոչվում էր Քամ)¹⁶։ Արշակունիների արքայատոհմի հայկական ճյուղի ավանդական հիմնադիր Վաղարշակի մասին նա գրում է. «...Միաբան է եւ Վաղարշակ զօր բազում յԱտրպատական է եւ ի Հայոց, որ ի միջոցի աշխարհիս, արս անուանիս եւ քաջս, եւ զկոչեցեալն Բագարատ, եւ որք ընդ նովաւ քաջք, եւ ծովեզեբեայսն մանկունս, որք ի Գեղամայ եւ ի Փանանացոց, եւ Շարայի ծնունդք եւ Գուշարայ եւ առ թեր Սիսականսն, եւ զԿադմեանսն եւ զնոցին մերձաւորսն, որպէս թէ զէս մասն աշխարհիս»¹⁷։

Ինչպես տեսնում ենք, Սեանի առափնյա բնակիչներին՝ «ծովեզեբեայսն», Խորենացին բաժանում է երկու խմբի՝ «որք ի Գեղամայ» և «ի Փանանացոց»։ Քանի որ Գեղամի զարմերը բնակվում էին լճի արևմտյան և հարավային ափերին (հենց այդ շրջաններն էին կազմում Սեծ Հայքի Գեղաքունի գավառը)¹⁸, ուստի և «քանանացիները» (իրականում՝ Քամանիուի բնակիչների)¹⁹ սերունդները զբաղեցնելու էին լճի ոչ թե այդ, այլ արևելյան ափերը։ Ըստ այսմ, Սարգսուրի II-ի հիշատակած Քամանիու երկիրը պետք է տեղադրել լճի ոչ թե հարավային, այլ արևելյան առափնյակում։ Ուրեմն, այն ներառելու էր այժմյան Կրասնոսելսկի շրջանի հարավային (միա՞յն) և Վարդենիսի շրջանի հյուսիսային մասերը, Փամբակի (Փառխոսի) լեռնանցքին հարող հողերով հանդերձ։ Այս դեպքում Քամանիուի հարավային հարևանն էր լինելու Մովակ—Ջոդ շրջանները բռնած²⁰ Արկունկի երկիրը։

Անդրսեանյան երկրներն արշաված Սարգսուրի II-ի բանակների երթուղին և արցախյան նորանվաճ շորս երկրների տեղադրությունն, ինչպես ասվեց, կարելի կլինի ճշտել միայն այն բանից հետո, երբ ճշգրտված կլինեն ոչ միայն Քամանիու երկիր, այլև սևանամերձ այն երկու լեռները²¹ (լեռնաշղթաների) տեղադրությունը, որոնք Գանձաղուան տարեգրության մեջ հիշվում են իրենց հետապնդած ուրարտական զորքերից տեղական բնակիչների խույս տալու կապակցությամբ։ Տեսնենք, որ այժմյան Վարդենիսի շրջանից (հին Սոդքից) Ար-

14 ՈւՊ, էջ 179, ծան. 1։ Гр. Капанцян. Историко-лингвистические работы. Т. II, с. 83; Н. В. Арутюнян. Бияйнили (Урарту), с. 264—265. ՀժՊՔ, հ. 1, էջ 81, ծան. 13, էջ 82, ծան. 24։

15 ՈւՊ, էջ 182։ Ըստ Ի. Մ. Դյակոնովի, Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքի ուրարտական ժամանակաշրջանի մի շարք տեղանուններում առկա վերջնական -iu-ն էթիոնյան տեղանուններին հատուկ տեղանվանակերտ վերջածանց է (И. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 18, пр. 21)։

16 Աստվածաշունչ, Գիրք ծննդոց. Թ, 18, Ժ, 6—7, Ժ, 15—20։

17 Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց. Բ, դ (այստեղ և հետագայում բնագրային ընդգծումները մերն են—Ս. Պ.)։

18 «Շին է զեզր ծովակին (Գեղամ), եւ թողու անդ բնակիչս եւ յիր անուն եւ սա զլեռնն անուան է Գեղ, եւ զէնս Գեղաբունի, որով կոչի եւ ծովն» (Մովսես Խորենացի, Ա, Ժբ)։

19 Ըստ երևույթին, դարձյալ քամանական և ոչ թե քամական-քանանական ծագում ունեի Գեթունի նախարարական տոհմը, որի նախնին էր «...ի զաւակէ Քանանացոց» (Մովսես Խորենացի, Բ, է)։

20 Гр. Капанцян. Историко-лингвистические работы. Т. II, с. 32, 81. ՈւՊ, էջ 182, 187։

21 «Ուշիւիս, Բամ—լեռներ Սեանա լճի մոտակայքում» (ՀժՊՔ, հ. 1, էջ 82, ծան. 28)։ Հմմտ. УХН, 155 Բ, стк. 27, с. 422—424։

12 «Հանդես», № 2

ցախ տանող երկու բանուկ ճանապարհներ կային՝ Դրանցից առաջինի սեանա-
մերձ հատվածը Արկուկի երկրի կենտրոնական մասից Արեւելասանյան (Սող-
քի) լեռնաշղթայի ուղղությամբ տանում էր դեպի Զոդի լեռնանցքը, իսկ երկ-
րորդինը՝ Փամանիուից Սեանի (Քաշաթաղի) լեռնաշղթայի ուղղությամբ տա-
նում էր դեպի Փամբակի լեռնանցքը։ Բնականաբար, իրենց երկրները երրորդ
անգամ ներխուժած ուրարտական զորքերից հենց այս ճանապարհներով էին
խույս ապառ Սեանա լճի հարավ-արեւելյան առափնյա շրջանների բնակիչները։
Ուրեմն, Արեւելասանյան և Սեանի լեռնաշղթաներն էին լինելու Ուշքիս և Բամ
կոշված այն լեռները, որոնց ուղղությամբ փախել էին տեղական բնակիչները։
Իսկ թե հիշյալ լեռներից որը ո՞ր լեռնաշղթային է համապատասխանում, ջուշց
են տալիս ավելի ուշ ժամանակների տեղանվանական տվյալները։

Արեւելասանյան (Սողքի) լեռնաշղթայի ստորոտում, այժմյան Վարդենի-
սի և Զոդի միջև, գտնվում էր Ոսկեշեն բնակավայրը²²։ Սրա անունը պարզ
ստուգաբանություն ունի. Ոսկեշեն < ոսկի-ա-շեն, Հայերեն ոսկի բառը պատա-
հարար չի հայտնվել այս տեղանվան մեջ։ Անվանակիր բնակավայրից ոչ հեռու,
Արեւելասանյան լեռնաշղթայի արեւմտյան լանջերին, գտնվում են Զոդի ոսկե-
փանքերը։ Դրանք «...ստորին անգամ շահագործել են Սեանի ավազանի ցե-
ղերը՝ մ. թ. ա. XV—XIV դդ. ...Ոսկու հին հանքերի շրջակայքում գտնվել են
հումքի ծեծելու, արագնելու սանդեր, լվանալու քարի տաշտեր, մեկ գերանից
պատրաստված սանդուղք, հանքաքարի թափոնից մեծ ու փոքր բլրակներ ու
փոսեր։ Պահպանվել են մ. թ. ա. II—I հազարամյակների բնակավայրերի
հեռքեր և դամբարաններ, որտեղ հայտնաբերվել են մ. թ. ա. XIII—X դդ. բրոն-
զե զենքեր, դրոգարանքներ, կենցաղային ու պաշտամունքային առարկա-
ներ...»²³։ Մեր կարծիքով, այս ոսկեհանքերն են պայմանավորել ոչ միայն
Ոսկեշեն, այլև Ուշքիս տեղանունների գոյությունը։

Դր. Ղափանցյանը Ուշքիս լեռնանունը բերելով բիալնեյենի (ուրար-
տական արձանագրությունների լեզվի) հոլովական վերջավորությամբ հան-
գեթձ, գրում է. «... Uškian... հայերեն կլինե՞ր՝ Ոսկեանք...»²⁴։ Դրանով նա
կարծես հաշտվում է Ուշքիս (Uškia) լեռնանվան հիմքում տեսնել հայերեն
ոսկի բառը²⁵։ Ինչպես հայանի է, ուրարտական սեպագիրը չի տարբերակում
u և o հնչյունները՝ երկուսի գլխաց տնենալով որպես u վերարտադրվող
միևնույն սեպախումբը (հմմտ. Šura = Ծովք, Guria = Գորիս և ալին)²⁶։ Այս

22 Ս. Ս. Երևմյան. «Հայաստանը Ռուսաստանին միանալու նախադրյալին (1785—
1825 թթ.)» քարտեզը (Հայկական ՍՍՌ ատլաս, էջ 107)։

23 Հայկական սովետական հանրագիտարան. հ. 3, Երևան, 1977, էջ 697—698։

24 ՈւՊ, էջ 182։

25 Հայերեն ոսկի բառի ծագման հարյուր վերջնականապես պարզված չէ, բայց արտա-
հայտված կարծիքներից առավել հավանականը երկուսն են. կամ նա ինչ-որ կապ ունի
չիտ. aṛksas (<*auskas), հին պոռուս. ausis, լատին. aurum (<*ausom), թուրք. u wäs,
թուրք. f. yasa, ysā (<*wēs) «ոսկի», հին հնդկ. vāsu «լավ», «հարուստ», «հարուստու-
թյուն», «ունեցվածք, ինչք» (Wörterbuch Sanskrit-Deutsch, von Prof. Dr. Dr. habil
Klaus Mylius. Leipzig, 1930, S. 427) բառերի հետ, կամ փոխառյալ է շումերերենից
(հմմտ. շումեր. guskin «ոսկի»)։ Տե՛ս Ն. Ա. Ծառյան. Հայերեն արձատական բառա-
րան. հ. Գ, Երևան, 1977, էջ 565—566։ В. Н. Топоров. Прусский язык. Словарь.
А—Д. М., 1975, с. 168—169; В. В. Иванов. Проблемы истории металлов на
Древнем Востоке в свете данных лингвистики.—Историко-филологический журнал,
1976, № 4, էջ 85։ Он же. К истории древних названий металлов в южно-балканском,
малоазийском и средиземноморском ареалах.—Славянское и балканское языкознание.
Античная балканистика и сравнительная грамматика. М., 1977, с. 26—27.

26 Н. М. Дьяконов. Предыстория армянского народа, с. 221, пр. 82. Он же
Хурритский и урартский языки, с. 55, пр. 64.

առթիվ նկատի առնենք նաև, որ ուրարտական արձանագրությունների որպես *s* վերարտադրվող սեպարտումբը սովորաբար արտացոլում է *s* հնչյունը (հմմտ. *Tušpa*=Տոսպ, *Alīštu*=Աղստև և այլն)²⁷; Իսկ *-šk-* հնչյունակապակցությունը հայերենում տալիս է ոչ թե *-սք-*, այլ *-սկ-* (հմմտ. *Uškaya*=Ուսկու)²⁸։ Ինչ վերաբերում է *Uškia* լեռնանվան *-ia* վերջավորությունը, ապա արդեն ապացուցված է, որ ուրարտական ժամանակաշրջանից եկող տեղանուններում *-ia* վերջավորությունը վերածվել է *-ի-ի* (հմմտ. *Teria*=Տրի, *Giarnia*=Գառնի և այլն)²⁹։ Այսպիսով, ուրարտական ժամանակաշրջանի *Uškia* (=Օսկիա) և զրարարյան ոսկի (=oski) համապատասխանությունը վկայում է հօգուտ նրա, որ Ուշքիա լեռը եղել է Արևելասահայան (Սող-քի) ոսկեբեր լեռնաշղթան՝ այն լեռնաշղթան, որից արևմուտք էր գտնվում նույն ոսկի բառն իր անվան հիմքում ունեցող Ոսկեշեն բնակավայրը։ Այս դեպքում, Կանձաղոտան տարեգրության մեջ հիշատակված երկրորդ սահանամերձ լեռը՝ Բամը, լինելու է Փամբակի լեռնանցքի շուրջ տարածված Սևանի (Քաշաթաղի) լեռնաշղթան։

Բամ լեռան և Սևանի լեռնաշղթայի նույնությունից ելնելով, փորձենք ստուգաբանել լեռնաշղթայի արևմտյան լանջերից սկիզբ առնող և Սևանա լիճը թափվող Փամբակ գետի անունը։ Նրա անունով է կոչվում ինչպես Սևանի լեռնաշղթան հատող Փամբակի լեռնանցքը, այնպես էլ նրա և Սևանա լճի միջև՝ Վարդենիսի շրջանի հյուսիսային մասում գտնվող Փամբակ (Ղուշի դարասի) գյուղը։ Ըստ երևույթին, այս անվանումների հիմքում ընկած է Սևանի լեռնաշղթայի հին՝ Բամբակ (<Բամ) անունը։ Ծիշտ նույն կերպ՝ Բամբակ (ոչ թե (Փամբակ) է նախապես եղել Շիրակի հյուսիս-արևելքից մինչև Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափերը ձգվող Փամբակի լեռնաշղթայի հին անունը, որովհետև նրա հյուսիսային ստորոտները բռնած և Փամբակ գետի հովիտը կազմող շրջանի միջնադարյան անունը Բամբակի ձուռ էր։ Վերոբերյալ անվանումների մեջ Բամ- արմատի Բամբ- տարբերակին (հմմտ. բեմ-բ, կալամ-բ, պատը-գամ-բ) կցվել է հայերենի -ակ վերջածանցը (հմմտ. գանձ-ակ, կոն-ակ, Բամ-ակ)։

Բամ-Բամբ(ակ)-Փամբ(ակ) համապատասխանությունների տեսանկյունից ուշագրավ են նաև Փամբ լեռնանունը և նրանից ածանցված գետանունն ու տեղանունները։ Փամբակի լեռնաշղթայի Մենասար (2419 մ) գագաթը, որը գտնվում է Արագածի շրջանի լեռնապար գյուղից հյուսիս-արևելք, նախապես կոչվում էր Փամբ³⁰։ Նրա անունն է կրում Սպիտակի շրջանի հարավից հոսող այն գետակը՝ Փամբիջուր, որը Ջրաշենի և Սպիտակի միջև միախառնվում է Որդնավ գետակին³¹։ Արագածի շրջանի բնակավայրերից երկուսը՝ Լեռնապարը և Սիփանը ևս նախապես կրում էին Փամբ անունը։ Սրանցից առաջինը կոչվում էր Հայի Փամբ կամ Փամբ Հայկական (նաև Փամբակ Ղարափիլիսա յայլա)³²,

27 И. М. Дьяконов. Предыстория армянского народа, с. 221, пр. 82 и Хурритский и урартский языки, с. 56.

28 Թավրիզից արևմուտք ընկած այս շրջանի հայկական անունը տե՛ս «Պատմություն Առաքել վարդապետի Դարժեցոյ»։ Վաղարշապատ, 1896, էջ 482։

29 Հ. Հ. Կարագյուղյան. Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, էջ 62, 64—66, 73։ Ուրարտական ժամանակաշրջանի *-ia* և զրարարյան *-ի* տեղանվանական վերջավորությունների համապատասխանության տեսանկյունից հմմտ. հ.-ե. *-iǰo-/-iǰa- >* հայ. *ի* (Г. Б. Джаукян. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982, с. 244)։

30 Ա. Ա. Ասլանյան, Հ. Ղ. Գրգեարյան. Հայկական ՍՍՌ աշխարհագրական անունների համառոտ բառարան. Երևան, 1981, էջ 135, 194։

31 Նույն տեղում, էջ 194։

32 Նույն տեղում, էջ 84, 194։

իսկ հրկրորդը՝ Քրդի Փամբ կամ Փամբ Քրդական (նաև Քամբ)³³, Փամբ յիռան կամ նույնանուն բնակավայրերի անունով Փամբի լեռնանց է կոչվում Արագածի շրջանի Միլքար գյուղից դեպի Սպիտակի շրջանի Զրաշեն գյուղը տանող և Փամբակի լեռնաշղթան հասող լեռնանցքը³⁴, ինչ վերաբերում է *Բամ(բ) > Փամբ և *Բամ(բ)ակ > Փամբակ անցումներին, ապա զրանք տեղի էին ունենալու կամ մասնակի տարեմանությամբ (բ-բ < ր-ի), կամ իրանական ու թյուրքական լեզուների փամբակ (pambak, pambəq «բամբակ») բառի ազդեցությամբ: Վերջինիս առթիվ ուշագրավ է Հին Բայազետից արևմուտք դառնալով լեռներից մեկի՝ Փամբակ անունը և այդ անվան հետևյալ բացատրությունը. «Կոնկուս յայտնումն ի բնակչացս, քանզի հրկրագործք սերմանեն զունդ բամբակի մինչև չե է սպառեալ ձին ի զագաթանի սորին, այլ ի սպառելն ոչ ևս սերմանեն, զի ոչ գայ ի հասունութիւն»³⁵:

Սարգսի 11-ից բացի Բամ անունով լեռ է հիշատակում նաև նոս հայրը՝ Արգիշթի 1-ը (մ. թ. ա. 786—764 թթ.): Նրա խոստորյան տարեգրության մեջ կարգում ենք. «Խալդյան մեծությամբ Արգիշթեն ասում է. — Երբ Բևխուրա լքադարը՝ վերապաշարեցի, Բևխուրա լքադարի մարզի Բամ լեռը՝ փլվեց. ձուխն [?] /ու/ մուր [?] այժմ վրայից [?] մինչև արևն է երևում: Երբ Բամ լեռը՝ փլվեց, ևս Բևխուրա լքադարը՝ գրավեցի»³⁶: Սարգսի 11-ի հիշատակած Բամ լեռան և Սևանի լեռնաշղթայի նույնությունը արդեն բավականաչափ հիմք է տալիս մերժելու համար նրա հոր հիշատակած համանուն լեռան և Սևանի լեռնաշղթայի (ուրեմն, նաև երկու Բամերի) նույնությունը³⁷, մասնավորապես Արգիշթի 1-ը անդրսևանյան շրջաններում երբեք չի եղել և, բացի զրանից, «Բեբես Bami անունը շատ տեղերում է եղել»³⁸: Ինչպես նշվեց, Բամբակ անունն են կրել նաև Փամբակի լեռնաշղթան և Հին Բայազետից արևմուտք ընկած լեռներից մեկը: Իսկ քանի որ Բամբակ < *Բամ-բ (-ակ), ուստի և Արգիշթի 1-ի հիշատակած Բամ լեռը, ի տարբերություն նրա որդու հիշատակած համանուն լեռան, պետք է լինել կամ Փամբակի լեռնաշղթան (թե՛ նրա Փամբ գագաթը), կամ Հին Բայազետից ոչ հեռու գտնվող Բամբակ լեռը: Եթե խոստորյան տարեգրության նկատարությունը արտացոլումն է հրաբխի ժայթքմանն ուղեկցող երևույթների, ապա ամբի համանականը վերջին ենթադրությունն է, որովհետև Հին Բայազետից (այժմ՝ Դուրբեյազիլ) հարավ-արևմուտք տարածված Մադկանց (Ալադաղի) լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը՝ Թոնդրակը (3542 մ), գործող հրաբուխ է:

Տեսանք, որ Սարգսի 11-ից խուլս տված Սևանա լճի հարավ-արևելյան ափերի բնակիչների հետքերով ուրարտական գործերը հասել էին Արևելասևանյան (Ուշթիա) և Սևանի (Բամ) լեռնաշղթաների լանջերը, որտեղ և «վերապաշարել» և «սպանել» էին նրանց մեծ մասին³⁹: Ուրեմն, ուրարտական գործերի մի մասը հետապնդել էր Զոդի, իսկ մյուս մասը՝ Փամբակի լեռնանցքի ուղղությամբ հետաքոյներին: Հետաքոյներ է, որ ուրարտական գործերի բաժանումը երկու մասի տեղի էր ունեցել մինչև նրանց սևանամերձ շրջանները ներխուժելը: Գանձադուռն տարեգրությունը պատմում է, որ էրիախի (Շիրակ) երկիրը վերանվաճելուց հետո, Սարգսի 11-ը ուղևորվում է Արաքսի վերին հո-

33 Նույն տեղում, էջ 176, 194:

34 Նույն տեղում, էջ 194:

35 Արամ Ղանալանյան. Ավանդապատում. Երևան, 1969, № 40, էջ 20:

36 ՀժՊՔ (Թարգմանությունը Հ. Հ. Կարազյուզյանի), հ. 1, էջ 66: «Ամբողջ հատվածը ցույց է տալիս, որ Արգիշթի 1-ը բնության այս արհավիրքը օգտագործել է որպես ժամանակը նշող ժամանակ՝ իր կողմից Բևխուրա քաղաքի նվաճումը թվագրելու համար» (նույն տեղում, էջ 63, ծան. 32):

37 ՄԿԽ, Ե. 422—424:

38 ՈւՊ, էջ 183 (Գր. Ղափանցյանի բերած Bami ձևում - ու վերջնահանգը բիայներենի նամապատասխան հոլովական վերջավորությունն է):

39 ՀժՊՔ, հ. 1, էջ 80:

սանքի շրջանը: Բայց արաքսամերձ երկրների նվաճումը նկարագրելու փոխարեն, Սարգսուրի II-ը խոստում է զորքեր գումարելու և փոխարքայի հրամանատարության վերաբերյալ երկիր ուղարկելու մասին⁴⁰: Ապա, նա ինքը ևս արշավում է այդ երկիրը, որտեղ և, ըստ իր նկարագրության «եկավ առջևս նիդե արքան վեկեթուսե /երկրի/ ներկայագում /?/ էր: Մոռա դարձրի, հարկի տակ գցեցի...»⁴¹: Ուրարտագետները ենթադրում են, որ Սարգսուրի II-ը կամ հետաձգել էր Արարսի վերին հոսանքի շրջանի երկրների նվաճումը (սեանամերձ երկրների բարձրացրած ապստամբության պատճառով), կամ դրանք նվաճելու էր ուղարկել իր զորավարներին⁴²: Այսպես թե այնպես, ուրարտական արքան ստիպված է եղել հետևելու սեանամերձ երկրներ արշաված իր առաջապահ զորամասին:

Ըստ երևույթին, Սեանա լճի արևմտյան և հարավային ափամերձ շրջանները (հարավ-արևելյան առափնյակը ներառյալ) վերանվաճելուց հետո, ուրարտական երկու զորաբանականները շարունակել են գործել առանձին-առանձին՝ մեկը Զոդի, իսկ մյուսը՝ Փամբակի լեռնանցքների ուղղությամբ: Անաարակույս, այս լեռնանցքներով արևելք փութացող տեղական բնակիչների մի մասի հետքերով էլ ուրարտական զորաբանականները ներխուժել էին արցախյան երկրներ: Ընդ որում, ուրարտական զորաբանականներից մեկը Արկուկի երկրից Զոդի լեռնանցքով ներխուժել էր Թարթառ գետի, իսկ մյուսը Քամանիու երկրից Փամբակի լեռնանցքով՝ Շամբոր (Շամխոր-չայ) գետի վերին հոսանքի շրջանները: Հավանաբար, արցախյան երկրներ ներխուժելու որոշումը կայացվել էր մինչև այդ, որի համար էլ Սարգսուրի II-ը հետաձգել էր Արաքսի վերին հոսանքի շրջանը բռնած երկրների նվաճումը և իր ուղարկած զորաբանակի հետևից մեկ ուրիշ զորաբանակի գլուխ անցած ինքը ևս ժամանել էր ռազմական գործողությունների մերձսկանյան թատերաբեմ: Բացառված չէ, որ ուրարտական թագավորի կողմից արցախյան երկրների նվաճման որոշումն ընդունելու գործում իր դերն էր խաղացել նաև այն հանգամանքը, որ Սեանի ավազանին հարող այդ երկրները ուրարտական արշավանքների ժամանակ ապաստան էին տալիս, իսկ ուրարտական զորքերի հեռանալուց հետո նեցուկ էին դառնում իրենց սեանցի հարևաններին՝ ուրարտական լծի դեմ նրանց մղած պայքարում: Եթե, ասվածին հակառակ, ուրարտական զորքերի հիշյալ շորս երկրներ ներխուժելու երթուղին ենթադրենք միայն Զոդի լեռնանցքով Թարթառի հոսանքն էր վար Արցախ և Ուտիք տանող ճանապարհով, ապա այժմյան Մարտակերտի շրջանին համընկնող Տերիայի⁴³ (արշավուղու վերջնակետի) և Սեանա լճի հարավային ափին (Մովակից Զոդ) տարածված Արկուկի⁴⁴ միջև եղած համեմատաբար փոքր տարածությունը հնարավորություն չի տալիս միայն այս ճանապարհի շուրջ տեղադրելու թե՛ Տերիան, թե՛ մնացած երեք արցախյան երկրները: Մանավանդ, որ այս դեպքում արշավուղուց դուրս կմնան արձանագրության մեջ հիշատակված Քամանիու երկիրը (Սեանի արևելյան ափին) և Բամ լեռը (Սեանի լեռնաշղթան):

Ասվածներից բխում է, որ արցախյան շորս նորանվաճ երկրները տեղադրվում էին ոչ միայն Զոդի լեռնանցքով Պարտավ տանող, այլև Փամբակի լեռնանցքով Գանձակ տանող ճանապարհի արցախյան հատվածի շուրջ: Ըստ երևույթին, դրանցից երկուսը՝ Տերիան և մեկ ուրիշն ընկնում էին առաջին ճանապարհի շուրջ, Մուսվի (Մուրով-գաղի) լեռնաշղթայից հարավ, իսկ մյուս երկուսը՝ երկրորդ ճանապարհի շուրջ, Մուսվի լեռնաշղթայից հյուսիս: Քանի որ առաջին ճանապարհի վրա գտնվող Տերիան բռնում էր Թարթառի միջին հո-

40 ՈւՊ, էջ 181—182 (հմմտ. էջ 185):

41 ՆժՊՔ (թարգմանությունը Հ. Հ. Կարապետյանի), հ. 1, էջ 79—80:

42 Н. В. Арутюнян. Указ. соч., с. 272.

43 Ս. Տ. Երևմյան, Ն. Մառը և VII դարի հայոց «Աշխարհացոյց»-ը, էջ 82:

44 ՈւՊ, էջ 182, 187 (հմմտ. Н. В. Арутюнян. Указ. соч., с. 264, 265):

սանքի շրջանը, ապա նույն ճանապարհի վրա գտնված մյուս երկիրը պետք է տարածված լինեն նույն գետի վերին հոսանքի շրջանում՝ Զոդի լեռնանցքի և Տե-րիայի միջև։ Մուսլի լեռնաշղթայից հյուսիս ընկած երկրներից մեկը հարելու էր Փամբակի լեռնանցքին, ընկելով Շամբոր (Շամխոր-չայ) և Կոշկար (Կոշկար-չայ) գետերի վերին հոսանքների շրջանը, իսկ մյուսը տարածված էր լինելու նրա և Տերիայի միջև՝ Գանձակ (Գյանջա-չայ) և Կուրակ (Քյուրաք-չայ) գետերի վերին հոսանքների շրջանում։

Զոդի և Փամբակի լեռնանցքներով արևելք փախչող սևանամերձ շրջանների բնակիչները, ըստ երևույթին, ապաստան էին որոնում ոչ թե պարզապես հարևանների, այլ ցեղակից հարևանների մոտ։ Դա բխում է հին հայերի ծաղումնարանական ավանդույթություններից, որոնց համաձայն Հայկազն Գեղամը նախահայրն էր ոչ միայն Գեղարքունիքի, այլև հարակից հողերի հայ բնակչության։ Ահա Մովսես Խորենացու համապատասխան վկայությունները.

1) «Իսկ Գեղամ յետ ամսոց անցանելոյ ծնաւ զՀարմայ յԱրմաւիր. եւ թողեալ զՀարմայ յԱրմաւիր հանուբ՝ որդւովք բնակել, եւ ինքն զնաց զմիւս լեռամբն արեւելեան հիւսիսոյ, յեզր ծովակի միոյ։ Շինէ զեզր ծովակին, եւ թողուանդ բնակիչս. եւ յիւր անուն եւ սա զԵառնն անուանէ Գեղ, եւ զԷնսն՝ Գեղար-նունի, որով կոչի եւ ծովն։ Աստ ծնաւ զորդի իւր զՍիսակ, զայր սէգ եւ անձնեայ, բարեգեղ, կորովաբան եւ զեղեցկաղեղն»։

2) «Սմա զմեծ մասն ընչից իւրոց տունալ /Գեղամ/ եւ ծառայս անձինս բաղումս՝ սահմանս հատանէ նմա ժողովութեան ի ծովէն ընդ արեւելս մինչեւ զյաշտ մի, որ զետն Օրասիս հատեալ զքարանձաւս լեռանց՝ անցանէ ընդ խոխոմս ձիգս եւ նեղս, ահագին զնդնչմամբ իջանէ ի զաշտս։ Աստ բնակեալ Սիսակ՝ ընու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ. եւ զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիս. այլ Պարսք լըստակազոյնս եւս Սիսական կոչեն»։

3) «Բայց ինքն Գեղամ զառնայ անդրէն ի զաշտ անդր, եւ առ ոտամբ նորին լերինն ի ձորակի միում ամրոջ շինէ ձեռակերտ մի, եւ կոչէ զանուն նորս Գեղամի, որ յետոյ ի Գառնկայ թողանէ նորա անուանեցաւ Գառնի»։

4) «Ի սորա ծննդոց աստ ուրեմն առ Արտաշիսի թոռամբ Վաղարշակայ ոմն Վառսժ անուն պատանի լեալ, աջող յորս եղջերուաց եւ այծեմանց եւ ժարազուց, զիպաձգութեամբ նետից կորովի. զսա ի վերա որսոց արքունականաց կարգէ, եւ շէնս պարգեւէ նմա առ եգերք գետոյն, որ անուանեալ կոչի Հրազդան։ Եւ ի սմանէ ասեն լինել գտունն Վառսժունի»⁴⁵։

5) «Յետ սորա /Վաղարշակ/ մեծ եւ անուանի եւ բազմաբիւր զարեւելից քիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի եւ յամենայն գործ մտաւորութեան եւ հանձարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զղաշտն մեծ, որ անուանի Կուր։ Բայց զայս դիտեա՛, զի զցեղս զայս մեծ եւ անուանի մոռացումն եղեւ մեզ յառաջնումն մատենին յիշատակել, զգունդն որ ի Սիսակայ, որ ժողանգեաց զղաշտն Աղուանից եւ զԵռնակողմն նորին զաշտի, ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն որ ասի Հնարակերտ...»⁴⁶։

Սեանի ավազանի և անդրսեանյան շրջանների հնագույն բնակչության ազգակցության մասին են խոսում հնագիտական պեղումների ընձեռած տրվյալները ևս։ Մ. թ. ա. XIII—VIII դդ. կապակցությամբ Կ. հ. Քուշնարյովան գրում է, որ «այդ դարաշրջանի մշակույթի հզոր օջախներից մեկը Հայաստանում գտնվում էր Սեանի ավազանում»⁴⁷։ Մ. Ն. Պոգրեբովան նույն ժամանակաշրջանի «կենտրոնական-անդրկովկասյան» (Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքի) մշակույթին տալիս է այնպիսի սահմաններ, որոնց ներսում են հին Սյունիքի (Սեանի ավազանով), Արցախի, Ուտիքի մեծ մասը և արևելյան (բուն)

⁴⁵ Մովսես Խորենացի, Ա, Ժբ։

⁴⁶ Նույն տեղում, Բ, Ը։

⁴⁷ К. Х. Кушнарева. Археология Армении (Обзор литературы, вышедшей в Армении с 1943 по 1970 г.).—Краткие сообщения о докладах и полевых исследованиях института археологии, 132. Археология Кавказа и Средней Азии. М., 1972, с. 109.

Գուգարբը⁴⁸ և նրա որում, այդ տարածքում «...ըստ գեներալի ձևերի հստակորեն տառնաձևանում են Մերձսեանյան և Ղարաբաղյան, ինչպես նաև Շամքորի շրջանները»⁴⁹։ Ըստ Մ. Ն. Պոգրեբովայի՝ «հատկապես մոտ է Մերձսեանյան և Ղարաբաղյան շրջանների մետաղական արտադրանքը՝ իր հերթին կապված Սեանա լճից հյուսիս և արևմուտք ընկած շրջանների հետ»⁵⁰։

«Ուրարտական» դարաշրջանին հաջորդած «վաղհայկական» դարաշրջանում ևս Սեանի ավազանի և անդրսեանյան շրջանների բնակչությունը շարունակում էր մնալ ազգակից (և հ.՝ հայկական էթնիկական տարրը ներկայացնող) մի ամբողջություն։ Ի հաստատումն դրա, իրենց ստուգաբանություններով հանդերձ, բերենք այս նույն շրջանների «վաղհայկական» դարաշրջանից եկող տեղանվանական տվյալներից երկուսը՝ Մաղէֆ և Փառնէս։ Այս անուններն էին հնում կրում Սեանի լեռնաշղթայով միմյանցից բաժանված Սյունիքի և Արցախի հարևան գավառները։ Սրանցից առաջինը բռնում էր Սեանա լճի արևելյան և հարավ-արևելյան ափերը⁵¹, իսկ երկրորդը՝ Շամքոր գետի վերին հոսանքի շրջակայքը⁵²։ Վերևում տեսանք, որ խորհնացու համար Սեանի առափնյա շրջանների, դրանց թվում և Մաղէբի, բնակիչները պարզապես «ծովեզերական» էին։ Հենց այս անվանումն էլ, մեր կարծիքով, տալիս է Մաղէֆ գավառանվան ստուգաբանության բանալին։ Ցեղանվանական ծագմամբ այս տեղանունը պետք է տրոհել ծալ- արմատի, -դէ- ցեղանվանակերտ վերջածանցի և -ֆ հոգնակիակերտի։ Ցեղանվան ծալ- բաղադրիչը, հայերեն ծով բառի մի տարբերակն է, առկա նաև ծալի («ծովագոյն աչօք. անուշ կապուտակ տեսանելիօք. խայտակն...») ⁵³ բառում։ Հավանաբար ծալդէֆ գավառանվան մեջ ծով-ի դիմաց առկա ծալ-ը տեղական հին արտասանության հետևանք է (հմմտ. Ղարաբաղի բարբառում կալ-ը՝ կով-ի փոխարեն) ⁵⁴։ Գավառական -դէ- բաղադրիչը համարվեք է -դի ցեղանվանակերտ-տեղանվանակերտ վերջածանցին ⁵⁵։ Սա իր -դի- > -դէ- անցմամբ դարձյալ տեղական արտասանության հետևանք է (հմմտ. Ղարաբաղի բարբառում մրէն < մրին, կա՛ցրէն < կացին, կա՛րէն < կարին, տկո՛ղէն < *տկաղին ⁵⁶ և այլն)։ Այսպիսով ծալ-դէֆ-ը նշանակում է պարզապես «ծովայիններ» և ներկայացնում է իմաստային համարվեք Սեանի ավազանի բնակիչների խորհնացու բերած «ծովեզերական» անվան։

Փառնէս տեղանունը, իր հերթին, կարելի է տրոհել փառ- արմատի, -նէ- > -նի- ցեղանվանակերտ վերջածանցի և -ս (հայցականով) հոգնակիա-

48 М. И. Погребова. Иран и Закавказье в раннем железном веке. М., 1977, с. 11, карта 1.

49 նույն տեղում, էջ 27։

50 նույն տեղում, էջ 28։

51 Մաղէֆ-ը ունի իր Չաղէֆ և Մաղի տարբերակները։ Հին հույները հայկական այս գավառը կոչում էին Σαλαζαγ (Ptol., V, 12, 4, տե՛ս Ս. Տ. Երեմյան. Հայաստանը բոտ «Աշխարհագրոյց»-ի. Երևան, 1983, էջ 52, 80, 109)։ Σαλαζαγ < Σα. Σαλαζαγ (<)

52 նույն տեղում, էջ 88, 109, 117։

53 Նոր բաղադրիչ հայկական լեզուի. հ. Ա, Երևան, 1979, էջ 1013։

54 Նկատի առնենք, որ VIII դարից հայտնի «Արցախային» բարբառը կարող էր գոյություն ունենալ ավելի վաղ ժամանակներում ևս, որովհետև դեռևս V դարում հայերեն միևնույն բառը դրանցված է արտասանական հրեք տարբերակներով՝ բագով, սլագով, փագով (Н. А. Дюни. Дионисий Фракийский и армянские толкователи. П.-град, 1915, с. 149, 187)։

55 Հմմտ. Հերոդոտի ավանդած արևելահայկական "Αλαζονεία ցեղանվան և ուրարտական արձանագրությունների Puluadi անդրարարսյան երկրանվան համապատասխան բաղադրիչները։

56 Σλο՛ղէն < *տկաղին < *տի-կաղին «մե՞ծ կաղին» (բոտ երևույթին, արքայակաղինը այսպես է կոչվել՝ ի տարբերություն խոզակաղնի՝ կաղին, կաղէն)։

կերտի: Սրանցից առաջինը, մեր կարծիքով, իր հիմքում ունի հ.-հ. *sner- («ճեղքել, կտրել») արմատը, որը հայերենում կարող էր արտացոլվել ինչպես փետ-, այնպես էլ փառ- տեսքով: Հմմտ. նույն արմատից կաղմված փետնեկ «ճեղք», փետնեկումն «ճեղք, բացվածք ծերպի» և բարբառային (խոտորչուր) փառակ «որևէ բանի վերևից ցած ճեղքված կեսը» բառերը⁵⁷, վերջինիս փառ- արմատը նույնական է լինելու Փառնեա տեղանվան փառ- արմատի հետ. որն, առաջադրված, նշանակում է «(լեռներում) ծեղկ, ճեղք, բացվածք»: Փառնեանվան -նե- բաղադրիչը տեղական ձևն է լինելու -նի ցեղանվանակերտ վերջածանցի հմմտ. արմենի-կ, գեղնի=գեղնի-կ, Աշոցնի-ք, Սիւնի-ք, Խաչ վերջին -ս-ն հաջորդական հոգնակի վերջավորությունն է (ցեղանվանական ծագմամբ տեղանուններից հմմտ. Սյաբեբա, Կաբա, Մոկա և այլն): Բնականաբար, Սևանի լեռնաշղթայից արևելք ընկած լեռնային շրջաններում բնակվելու պատճառով և ի տարբերություն իրենց «ծովեզերեայ» հարևանների, հյուսիսային Արցախի հնադրյան բնակիչները կոչվել են *փառնեա (ուղղ. հոգն. *փառնեա < *փառնիք)՝ «(լեռնային) ծերպերի բնակիչներ» իմաստով⁵⁸, ինչպես ծաղիք-ը, այնպես էլ փառնեա-ը սրյան հետագայում են վերածվել տեղանունների (հմմտ. Բալլ «հայեր» > Հալլ «Հալաստան», Վիրլ «վրացիներ» > Վիրլ «վրաստան» և այլն):

Վերոշարադրյալը դալիս է վերստին հաստատելու, որ Հայկական լեռնաշխարհի մերձսևանյան և հյուսիս-արևելյան եզերական շրջանների «ուրարտական» և «վաղհայկական» դարաշրջանների բնակչության միջև գոյություն ունեւր ծագումնաբանական սերտ կապ, որ տեղական բնակչության մեջ երկու դարաշրջաններում էլ հնգեվրոպական-հայկական էթնիկ տարրը⁵⁹ ունեցել է գերակշիռ դեր:

К МАРШРУТУ ЗАСЕВАНСКОГО ПОХОДА САРДУРИ II

С. Г. ПЕТРОСЯН

Резюме

В урартоведческой и арменоведческой литературе до сих пор не уточнены местоположение гор Бам (Бамни) и Ушкиа (Ушкиани) и маршрут проникновения войск Сардури II в засеванские районы Армянского нагорья. Исходя из сопоставления разновременных (с VIII в. до н. э.) топонимических данных (Бам—Փամբակ < *բամ-բ-ակ; Uskia—Սսկիէն < *Սսկի-ա-էն и др.), можно утверждать, что горы Бам и Ушкиа—это соответственно Севанский (Шахдагский) и Восточно-севанский (Соджский) хребты. Правильность такой локализации вытекает и из анализа событий, связанных с засеванским походом Сардури II. В таком случае урартские армии должны были проникнуть в северо-восточные окраинные районы Армянского нагорья из юго-восточных присеванских районов теми же путями, которые впоследствии вели из Содка (ныне Варденисский р-н АрмССР) на восток через Памбакский (в Севанских горах) и Зодский (в Восточносеванских горах) горные проходы. Значит, новопокоренные засеванские страны надо локализовать вокруг этих дорог, как севернее Мравского (Муровдагского) хребта, между Памбакским проходом и страной Териа (ныне Мартакертский р-н Нагорного Карабаха), так и южнее него, между Зодским проходом и Териа. Наши данные одновременно говорят о том, что индоевропейско-протоармянский элемент был доминирующим среди местного населения и в VIII—VII вв. до н. э., и позже.

⁵⁷ 2. Ա ճ ա ո յ ա ն. Հայօրոյն արմատական բառարան. հ. Դ, Երևան, 1979, էջ 496—7:

⁵⁸ Հմմտ. Փառնական լեռնանունը: Անվանակիր լեռնակատարը գտնվում է Զանգեզուրի և Մեղրու լեռնաշղթաների հատման վայրում՝ Ղափանի շրջանում (Ա. Ա. Ասլանյան, Շ. Ղ. Գրգեարյան. նշվ. աշխ. էջ 195):

⁵⁹ Տեղաբնիկ (և առաջնային) հայկական տարրերի կոչքին երկու դարաշրջաններում էլ այստեղ գոյություն ունեին եկվոր (և երկրորդային) էթնիկ տարրեր: Վերջիններս համականում ներկայացնում էին թրակախոս ցեղերը: